ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-2026

«14» մարտի 2022թ.

«Յունիքիմ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Վ. ՕՀԱՆՅԱՆԻՆ,
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
«ԷՆԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ,
«Ֆիեստա Գրուպ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ,
«Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ԱՄԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ,
«Տոդոս-Ակա» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԴՈԽՈՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. մարտի 14-ի որոշմամբ 6-րդ չափաբաժնի մասով «Յունիքիմ» ՍՊԸ-ն, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 24-րդ չափաբաժինների մասով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն, 18-րդ չափաբաժնի մասով «ԷՆԱ» ՍՊԸ-ն, 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով «Ֆիեստա Գրուպ» ՍՊԸ-ն, 25-րդ չափաբաժնի մասով «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ն, 26-րդ չափաբաժնի մասով «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն հայտարարվել են ընթացակարգի ընտրված մասնակիցներ:

Ընթացակարգի 6-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 24-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2022թ. մարտի 13-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/04» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/04» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ /+37410/ 511-792, 511-788